ԿԱՆԽԵԼ ԿԱՐԵԼԻ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Լեռնային Ղարաբաղի հարցով կազմված հանձնաժողովի աշխատանքի ժամանակ գտնվելով Արցախում, ուր երեկոյան մենք իմացանք, որ Մոսկվայում՝ նստաշրջանում, խոսակցություն է գնում մեր հարցի քննարկումը հետաձգելու մասին։ Այս լուրը կայծակի պես շանթահարեց ղարաբաղցիներին, որ լարվածության և այս մեկուկես տարվա ընթացքում, թվում է, սովոր էին ամեն ինչի։ Բոլորից շատ տարակուսում էինք մենք՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դեպուտատներս։ Ինչ ասես անում էինք, չարչարվում, որ հանձնաժողովը ոչ մի րոպե չկորցնի։ Ուզում էինք ժամկետից շուտ ավարտի աշխատանքը և վերադառնա Մոսկվա, որ հարցի քննարկումն սկսվի և ավարտվի մինչև արձակուրդ։ Եվ հանկարծ նորից հետաձգում։

Հաջորդ օրը սովորականի պես մարդիկ հավաքվեցին Ստեփանակերտում, քաղկոմի շենքի առջև։ Նրանց մոտով անցնելիս ես կանգ առա, և մարդիկ իսկույն շրջապատեցին ինձ։ Բոլորն արդեն տեղյակ էին, որ հարցը հետաձգվում է։ Եվ բոլորը միաձայն պահանջում էին, որ դեպուտատներից որևէ մեկը անմիջապես մեկնի Մոսկվա։ Նրանց հետ ոչ ոք չէր վիճում (ժողովուրդն իրավացի էր։ Իրավացի՝ ինչպես միշտ)։ Առաջ անցնելով ասեմ, մինչ Բորիս Դադամյանը շտապեց տուն, որ իրերը վերցնի, մինչ ես շրջգործկոմի աշխատասենյակներից մեկում նստած մեքենագրում էի դեպուտատական հարցումի տեքստը, մարդիկ արդեն գնացել էին օդանավակայան, որ օդաչուներին խնդրեին փոքր-ինչ հետաձգելու վերջին ինքնաթիռի թռիչքը։

Հաջորդ օրը Դադամյանը ելույթ ունեցավ նստաշրջանում։ Բայց ոչ բոլորը գիտեն, որ նրանից անմիջապես հետո խոսք վերցրեց Հայկական Հանրապետության ներկայացուցիչը և նստաշրջանին խնդրեց Բորիս Դադամյանի ելույթը ցուցադրել հեռուստատեսությամբ։ Ինչպես միշտ, նման դեպքերում, նա իբրև փաստարկ նշեց տխրահռչակ իսլամական գործոնը, որը «հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների»։ Ղարաբաղի դեպուտատի ելույթը չհաղորդվեց։ Ցնցված հարցումը հրապարակվեց բյուլետեններում, որոնք համարակալվում են և ուղարկվում միայն դեպուտատներին։

Հանձնաժողովը ավարտեց աշխատանքը։ Նա աշխատեց տասն օր, եղավ առանց բացառության բոլոր շրջաններում։ Ես գրառումներ եմ արել։ Երևի մի օր կհրապարակեմ Ղարաբաղում Գերագույն խորհրդի հանձնաժողովի աշխատանքի մասին յուրօրինակ ռեպորտաժ, իսկ այժմ համառոտակի այն մասին, թե ինչ եղավ հետո։ Արդեն եզրափակիչ օրը պարզվեց, որ հանձնաժողովի անդամները չեն հասցնում կազմել վերջնական առաջարկություններով ամփոփիչ փաստաթուղթ։ Մնում էր ընդամենը մեկ շաբաթ։ Ուստի, որոշվեց, որ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը ելույթ ունենա նստաշրջանում և պատմի մարզում կատարած իրենց աշխատանքի մասին։ Հանգամանալից տեղեկություն տա և հայտնի, որ հարցի բուն քննարկումը կլինի աշնանային նստաշրջանում։

Ղարաբաղի բոլոր դեպուտատները թռան Մոսկվա։ Որոշեցինք, որ ելույթ կունենամ ես։ Պատրաստեցի ելույթի տեքստը, կոլեգաներիս անունից գրեցի դեպուտատական հարցում։ Եվ ամեն օր փորձում էի բարձրանալ ամբիոն։ Հանգամանորեն կարելի էր խոսել միայն երեկոյան նիստերում՝ «Տարբեր» ծրագրի ժամանակ, քանի որ ցերեկային նիստերում հաստատում էին օրինագծեր, որոնք, որպես կանոն, ընդունվում էին մեծ դժվարությամբ։

Անընդհատ զգում էի, որ ուզում եմ մտնել դահլիճում դրված միկրոֆոնին և հարցեր տալ։ Չէ որ թեմաների մեծ մասը հրապարակախոսական աշխատանքիս երկար տարիների ընթացքում ես մշակել էի։ Դրանք սրտամոտ էին ինձ։ Բայց գլխումս և սրտումս միայն մեկ թեմա ունեի, մեկ ցավ՝ Ղարաբաղ։ Նստաշրջանի ավարտից երկու օր առաջ նախագահող Ռ. Ն. Նիշանովը ուշ երեկոյան ասաց, որ ինձ ձայն կտրվի հաջորդ օրը։ Սակայն հաջորդ օրը «Տարբեր»-ի ողջ ժամանակը զբաղեցրեց պետպլանի նախագահ Յու. Դ. Մասլյուկովը։ Այդ ամենի մեջ, անկախ մյուս բաներից, կար նաև «խորամանկ» խաղ։ Սկզբում ժամանակը բավական շատ զբաղեցնել հասարակ մի հարցի քննարկումով, հետո ժամանակը սպառել պարզունակ քվեարկությամբ։ Եվ վերջում արդեն դիմել հոգնած դահլիճին ու, հոգոց հանելով, ասել. «Դե, ինչ, գուցե դադարեցնե՞նք մտքերի փոխանակությունը, արդեն ուշ է»։ Եվ իսկապես հոգնած դահլիճը գոհունակությամբ ծափահարում էր։ Եվ դա հասկանալի է. դահլիճի ոչ գլխում, ոչ սրտում չկա ցավ, դահլիճը դեռ չի մտածում վաղվա օրվա մասին, շրջափակման մասին, արյան մասին, ինչպես մտածում են մեր դեպուտատները, մեր բոլոր ընտրողները։

Եզրափակիչ օրվա նախօրյակին նախագահողը երդումներ էր տալիս, որ վերջին օրը նույնպես կլինի «Տարբեր» հարցերի քննարկումը։ Ուրեմն, եթե այդպես լինի, ես անպայման, ամեն կերպ կհասնեմ ամբիոնին։ Բայց «Տարբեր» չեղավ։ Երկար ընդմիջումից հետո եզրափակիչ խոսքով ելույթ ունեցավ Մ. Ս. Գորբաչովը։ Նրա ելույթից առաջ տեղից վեր թռավ Հենրիկ Իգիթյանը, սակայն Գերագույն խորհրդի նախագահը կանխեց նրա ելույթը։ Իգիթյանը մեր դեպուտատների անունից ուզում էր ասել, որ մենք բոլորս միասին ունենք մեկ ելույթ։ Փաստորեն խոսք չտրվեց նաև Վասիլի Բելովին։ Տեսնելով դահլիճում տիրող իրավիճակը, վհատվեցին նաև նրանք, ովքեր ձեռքերը պարզած ինչ-որ բան էին ուզում ասել։

... Մեծ ընդմիջման ժամանակ սովորաբար շատերն են մոտենում նախագահությանը և անմիջական ու «շտապ» զրույց է վարվում նախագահության անդամներից յուրաքանչյուրի հետ։ Այս անգամ այդ «պրոցեդուրային» հատկացված ողջ ժամանակը զբաղեց Գոհար Ենոքյանը։ Նա Գորբաչովին ցույց տվեց Երևանից ստացված հեռագիրը։ Այնտեղ խոսվում էր շրջափակման սարսափների և իշխանությունների «անօգնականության» մասին։ Հատուկ նշվում էր Ղարաբաղի ծանր վիճակը։ Միխայիլ Սերգեևիչն ասաց, որ նա գիտի այդ մասին, ավելացրեց, որ երեկ Բաքվում մի հայ երկաթով խփել է մի ադրբեջանցու գլխին ու տուրուդմոցը շարունակվել է մինչև կեսգիշեր, ու այնտեղ ստիպված են եղել զորք բերել։ Գոհարը պատասխանեց. «Բաքվում, կարելի է ասել, ընդամենը մեկ հայ է մնացել, մի՞թե նա հանդգնել է կռվել մեկուկես միլիոնանոց ադրբեջանական քաղաքի հետ»։ Եվ ապա ավելացրեց. «Ես ձեզ իմ ձայնը տվեցի այն հույսով, որ հենց դուք կլուծեք այս բոլոր պրոբլեմները»։

Նրանց երկխոսությունը բավական երկար տևեց։ Դրանից հետո Վալերի Գրիգորյանը և ես մոտեցանք պաշտպանության մինիստր Դ. Տ. Յազովին։ Ես անմիջապես հարց տվեցի. «Դմիտրի Տիմոֆեևիչ, արդյոք դուք գիտե՞ք, որ արդեն ինն ամիս է անցել այն օրից, ինչ Կիրովաբադում ավերել ու պղծել են Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանի հուշարձանը»։ «Առաջին անգամ եմ լսում»,— ասաց մինիստրը։ «Այդ ինչպե՞ս է լինում,— խոսակցությանը միջամտեց Վալիկը,— որ երկրում պղծել են խորհրդային ականավոր զորավարի հուշարձանը և երկրի պաշտպանության մինիստրը այդ մասին ոչինչ չգիտի»։ Եվ պաշտպանության մինիստրը անկեղծորեն հաստատեց իր անտեղյակությունը։ Ես նրան ասացի, որ այդ մասին հազարավոր հեռագրեր են ուղարկված երկրի պաշտպանության մինիստրի անունով։ Դմիտրի Յազովը ուսերը վեր քաշեց և պատասխանեց. «Չեմ ստացել»։ «Իսկ հեռագիրը չե՞ք ստացել, որ հայկական Շուշի քաղաքում պղծվել է Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշարձանը»։ Այդ մասին էլ չգիտեր մինիստրը։ Ես նրան ցույց տվեցի [illegible] թղթերը և ասացի, որ այսօր երեկոյան պետք է դեպուտատական երկու հարցում անեմ և երկուսն էլ ուղղակիորեն առնչվում են պաշտպանության մինիստրության հետ։

Անկեղծորեն վատ զգալով, որ ինքն անտեղյակ է Հ. Բաղրամյանի և Ն. Ստեփանյանի հուշարձանների պղծման մասին, Դ. Տ. Յազովը ասաց, որ ես անպայման ներկայացնեմ իմ դեպուտատական հարցումները։ Բայց այդ օրը ոչ ոքի չհաջողվեց ելույթ ունենալ։ Ժողովրդական դեպուտատների առաջին նստաշրջանի վերջին օրը ավարտվեց, ինչպես արդեն ասվեց, Մ. Ս. Գորբաչովի եզրափակիչ խոսքով։ Լ. Ա. Հարությունյանի առաջարկով, այդ օրը Հայաստանի և Ղարաբաղի բոլոր դեպուտատներս միասին էինք նստել։ Եվ հենց որ Գերագույն խորհրդի նախագահն ավարտեց իր ելույթը, մենք բոլորս մոտեցանք նախագահությանը։ Ես Մ. Գորբաչովին մեկնեցի իմ չկայացած ելույթը և դեպուտատական բլանկների վրա մեքենագրված երկու հարցումը, ասելով. «Ինձ չհաջողվեց ելույթ ունենալ, սակայն խնդրում եմ ընդունել ելույթիս տեքստը և դեպուտատական հարցումները, որոնք մտադիր եմ հրապարակել տեղական մամուլում։ Բլոկադա, շրջափակում է, Միխայիլ Սերգեևիչ, շրջափակում։ Ահա թե ինչն է այսօր հարցերի հարցը, կարևորագույն հարցը»։

Նախագահը մեզ հավաստիացրեց, որ ինքը տեղյակ է իրավիճակին։ Եվ այստեղ խոսակցության մեջ մտան Ղարաբաղի ու Հայաստանի մյուս դեպուտատները։ Շրջափակման մասին մենք զրույց ունեցանք նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա. Ի. Լուկյանովի հետ, որը մեզ հավաստիացրեց, թե զբաղվում է այդ հարցով, հատկապես Լաչինի տեղամասով։ Ես նաև ավելացրի, որ հարկավոր է Բ. Օլեյնիկի ելույթը հրապարակել գոնե տեղական մամուլում։ Թե չէ ջայլամի քաղաքականություն է ստացվում. «Ժամանակ» ծրագիրը տեղեկացրեց Օլեյնիկի ելույթի մասին, բայց բուն ելույթը չհաղորդվեց։ Եվ մարդիկ տարակուսանքի մեջ են։

...Իմ ելույթի տեքստը ես ընթացքում անընդհատ փոփոխում էի։ Եվ կտրուկ փոխեցի հատկապես Օլեյնիկի ելույթից հետո։ Վերջնական տարբերակը ներկայացնում եմ ընթերցողի ուշադրությանը։

ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատները ստեղծված ողբերգալի իրավիճակում իրենց դեպուտատական պարտքն են համարում սույն պաշտոնական հայտարարությունն անել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին։ Լեռնային Ղարաբաղում ճգնաժամը հասել է բուն էության չհայտարարված պատերազմի փուլին։ Պահանջվում է շտապ և անհետաձգելի պառլամենտական վճռական և քաղաքական միջոցներ ձեռնարկել, որպեսզի ռեգիոնում տեղի ունեցող պրոցեսները վերջնականապես բարձիթողի չարվեն։ Ղարաբաղում արդեն չորս ամիս անընդմեջ փորձադաշտ է, որի մասին համառորեն և հետևողականորեն լռում են սովորաբար ակտիվ զանգվածային տեղեկատվության միջոցները։ Ասես խոսքը չի վերաբերում իրենց համաքաղաքացիների, իրենց հայրենակիցների դրամատիկ ճակատագրին։ Իսկ չէ որ մինչև հարցի վերջնական լուծումը հանգիստ ու խաղաղ ապրելու համար միայն մի բան է հարկավոր՝ ճշմարտություն և օբյեկտիվություն։ Երեկ այս ամբիոնից Բորիս Օլեյնիկը, ինչպես ինքն արտահայտվեց, Գերագույն խորհրդի անդամներին նախնական տեղեկություն տվեց Լեռնային Ղարաբաղի ողբերգալի վիճակի մասին։ Հանձնաժողովը, ինչպես այստեղ ասվեց, հանգել է միանշանակ եզրակացության, որ Լեռնային Ղարաբաղում իրադրությունը դուրս է եկել սովորական վիճակից, որը կարելի է բնորոշել որպես պայթյունավտանգ։ Հասկանալի է նաև բանաստեղծի բարի ցանկությունը. գտնել մերձեցման, շփման եզրեր։ Եվ նա ամենից առաջ կոչ է անում հանրապետությունների ղեկավարներին՝ առաջին դեմքերին, գոնե կես քայլ ընդառաջ գնալ միմյանց։

Չխոսենք այն մասին, որ առաջին դեմքերի և երկու ժողովուրդների միջև գտնվում է ևս մեկ եզր՝ Սումգայիթի եզրը, և այստեղ «ընդառաջման քայլի» մասին խոսելիս պետք չէ մոռանալ պրոբլեմի բարոյական կողմը։ Բայց խոսենք այլ բանի մասին։ Բորիս Իլյիչ, արվել է և՛ կես քայլ, արվել են և բազմաթիվ քայլեր, բայց՝ ապարդյուն։ Նախքան այդ «կես քայլերը» անկեղծորեն գցելը, պետք է սեփական ժողովրդի առաջ դատապարտել Սումգայիթը։ Ես վերջերս իմացա, որ այսօր էլ Ադրբեջանում շատերը հստակ դեռ չգիտեն, թե ով է ում սպանել, ողջակիզել Սումգայիթում։ Պարզապես մարդկանց հիշողության մեջ տպավորվել է. «կան տարբեր ազգության զոհեր»։ Ես այն տպավորությունը ստացա, որ հանրահայտ բանաստեղծի խոսքը ճզմվել և ուղեկցվում էր միևնույն ձեռքով։ Նույն այն ձեռքով, որն արդեն մեկուկես տարի Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրից, հատկապես Սումգայիթից հետո «ճշտում» և վարում է հեռուստատեսությամբ ու մամուլում տրվող բոլոր հաղորդումները։ Միշտ այնպես է արվում, որ ունկնդիրն ու ընթերցողը հանկարծ չհասկանան, թե կոնկրետ ով է ում սպանել, ով է ում հուշարձանները պղծել։

Եվ դահլիճում նստածներից ում էլ որ հարցնեիք Օլեյնիկի ելույթից հետո, թե ով է ավերել ու պղծել պատմական ու մշակույթի հուշարձանները, հազիվ թե պատասխան ստանայիք։ Իսկ ձեզ կասեմ, որ խոսքը վերաբերում էր Շուշիին, որտեղ եղել էր հանձնաժողովը, և խոսքը այն մասին էր, որ Շուշիում ադրբեջանցիները ավերել ու պղծել են հայկական հուշարձանները, շիրմաքարերը, խաչքարերը, որոնց թիվը տասնյակ հազար է կազմում հայոց հինավուրց գերեզմանոցում։ Խոսքն այն մասին է, որ ադրբեջանցիները ջարդուփշուր են արել և պղծել են Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշարձանը, բոլոր նշանավոր հայ հեղափոխական և պետական գործիչների հուշարձանները, ինչի մասին որոշել եմ ներկայացնել դեպուտատական հարցում։

Մեկուկես ամիս առաջ, Մ. Ս. Գորբաչովի հետ հանդիպման ժամանակ ասվեց այն մասին, որ ամենամոտ ժամանակներում, կոնկրետ տասն օրվա ընթացքում, որոշում կկայացվի մարզում մարզկոմի և մարզգործկոմի ֆունկցիաների վերականգնման մասին։ Մենք, այդ հանդիպման մասնակիցներս, ընտրողների առջև ելույթ ունենալիս ասացինք, որ այդ հարցը կլուծվի։ Բայց այժմ ոչինչ չի արված և չի էլ նախատեսվում։

Այսօր մենք ընդունել ենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը հանցագործության դեմ վճռականորեն պայքարելու մասին։ Ողջունելով այս այժմեական միջոցառումը, կուզեի այդ առթիվ ասել, որ արդեն մեկուկես տարի Լեռնային Ղարաբաղը գտնվում է դաժան շրջափակման մեջ, նկատի ունենալով անվերջանալի ավազակային հարձակումները հայկական տրանսպորտի վրա, նկատի ունենալով այն ճանապարհների անպատիժ և ինքնակամ փակումը, որոնք տանում են դեպի Ղարաբաղ։ [illegible]՝ միասնական տնտեսության տարածքում ինքնավար մարզը դարձել է մեկուսացված կղզի, իսկ հայերը՝ պատանդ։

Անվճռականությունը, պասիվությունը, կամա թե ակամա վարվող «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը սոսկ խորացնում են ճգնաժամի ընթացքը։ Քանզի բռնությունը ոչ միայն բռնություն է ծնում, այլև զորացնում է այն։ Մի՞թե ինչ-որ մեկին հարկավոր է, որ շրջափակումը շրջափակում ծնի, հարի պատերազմ՝ հարի պատերազմ։

Ղարաբաղի պրոբլեմի քննարկումը, ինչպես հայտնի է, տեղափոխվել է սեպտեմբեր, երբ իր աշխատանքը նորից կսկսի նստաշրջանը։ Սակայն ոչ մի րոպե չպետք է մոռանալ, որ այդ շաբաթներին Ղարաբաղի ժողովուրդը պետք է ապրի չհայտարարված պատերազմի պայմաններում։ Այսօր պետք է նստաշրջանը կամ հանձնաժողովը դիմի բնդվզած ժողովրդին, ինչպես կասեր Դոստոևսկին, և մարդկային բառերով կոչ անի դադարեցնել տանջալից ու տառապալից գործադուլը։ Պետք է ամեն ինչ անել, որ ԼՂԻՄ-ի ժողովուրդը համոզված լինի, որ Գերագույն խորհուրդը կստանա միմիայն և միմիայն օբյեկտիվ տեղեկություն ռեգիոնում տիրող իրավիճակի մասին։ Որ աշնանային նստաշրջանում կքննարկեն ողբերգականորեն ձգձգված հարցի լուծումը սոսկ միայն արդարության սկզբունքով։ Պետք է ի լուր ամբողջ ժողովրդի գործնականորեն ասել, որ շրջափակումը, որը հիմնովին բացառում է և ժխտում մեր երկրում իրավական պետության առկայությունը, անհետաձգելիորեն կվերացվի, որ այդ բլոկադայի համար լրական պատասխանատվություն կկրեն նաև տեղական իշխանությունները։

Վերջում կուզեի ասել հարգելի ժողովրդական դեպուտատներին, չնայած այս ամենին, հայ ժողովուրդը պահպանելով իր վսեմ արժանապատվությունը և համբերությունը հույսը չի կորցնում, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմը կլուծվի պառլամենտական, քաղաքական ուղիով։

... Կարծում եմ, որ ճիշտ կլինի, եթե յուրաքանչյուր դեպուտատ մամուլում հրապարակի իր դեպուտատական հարցումները, որոնց պատասխանը ըստ մեր որոշման պետք է տրվեր յոթանասուներկու ժամվա ընթացքում։ Իմ երկու դեպուտատական հարցումները, որոնք այժմ հրապարակվում են, անձամբ հանձնել եմ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. Գորբաչովին, որը փաստորեն արդեն պատասխանեց մեզ, խոստանալով, որ կզբաղվի և միջոցներ կձեռնարկի։ Ես հասկանում եմ. այսօր, երբ Ղարաբաղում և «նրա շուրջը» թափվում է մեր հայրենակիցների արյունը, հուշարձանների հարցը կարող է թվալ ոչ առաջնահերթ։ Սակայն այդպես կարող է թվալ սոսկ առաջին հայացքից։ Անպատիժ սրբապղծությունը, անպատիժ բարբարոսությունը միշտ էլ արյուն են բերում։ Ահա թե ինչու իմ առաջին դեպուտատական հարցումը վերաբերում էր հուշարձաններին։

... 1988 թվականի նոյեմբերին Կիրովաբադ քաղաքում ավերվել և պղծվել է Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանի հուշարձանը։ Չնայած ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ դատախազություն, պաշտպանության մինիստրություն, վետերանների խորհուրդ աշխատավորների ուղարկած բազմաթիվ բողոքներին՝ միջոցներ չեն ձեռնարկվել հուշարձանը տեղում վերականգնելու և հանցագործներին պատժելու համար։ Ասես խոսքերը մեկ արած՝ լռում էին նաև զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցները։

Հանցագործության անպատիժ թողնելը և լռության մատնելը ժամանակակից բարբարոսները յուրովի ընկալեցին։ Եվ գուցե բնավ էլ պատահական չէ, որ Գերագույն խորհրդի հանձնաժողովի Լեռնային Ղարաբաղ մեկնելու նախօրյակին ավերվեց և պղծվեց Անդրկովկասում միակ՝ Խորհրդային Միության կրկնակի հերոս (միակը, որ այդ բարձր կոչումը ստացել էր Հայրենական պատերազմի օրերին) Նելսոն Գեորգի Ստեփանյանի հուշարձանը, որ կանգնեցված էր նրա ծննդավայր Շուշի քաղաքում։ Ավերվել են նաև խոշոր հեղափոխական և պետական գործիչների հուշարձանները։ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում չի մնացել և ոչ մի հայ, թեկուզ հանրապետությունը ինքնավար է կոչվում այն պատճառով, որ հայկական է եղել։ Ներկայումս բուլդոզերի բերանների տակ են մնում հայկական ճարտարապետության գլուխգործոցները, հազարավոր խաչքարերը։ Եվ կրկին լռում են զանգվածային տեղեկատվության միջոցները։

Առաջարկում եմ պարտավորեցնել ԽՍՀՄ պաշտպանության մինիստրությանը, ԽՍՀՄ դատախազությանը, պատերազմի վետերանների խորհրդին և մյուս շահագրգռված գերատեսչություններին ու կազմակերպություններին հատուկ զբաղվել այդ հարցով, վերականգնել ավերված հուշարձանները, հայտնաբերել հանցավորներին և սրբապղծության ու բարբարոսության մասին հայտնել մամուլով։

Երկրորդ դեպուտատական հարցումը վերաբերում է շրջափակման պրոբլեմին։ Հայ դեպուտատները պարզել են, որ Գերագույն խորհրդի դեպուտատներից ոչ մեկը չգիտի ոչ միայն Ղարաբաղի շրջափակման, այլև Հայաստանում տևող շրջափակման մասին։ Այդ մասին չգիտի նաև երկրի բնակչությունը։ Ո՛չ իրավական մեր երկրում շրջափակումն իրենց մաշկի վրա զգում են միայն Արցախի և Հայկական Հանրապետության բնակիչները։

...ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Լեռնային Ղարաբաղի հարցով հանձնաժողովի հավաքած նյութերի մեջ կա նաև Ղարաբաղի Հաղորտի գյուղի գյուղացի Սարգսյանի անձնագիրը, որը տրվել է 1910 թվի սեպտեմբերի 13-ին։ Անձնագիրը, կամ ավելի ճիշտ, անձնագրային գրքույկը լրացված է ռուսերեն։

Գյուղացի Սարգսյանը, այսինքն ռուսական տերության քաղաքացին, այն ժամանակ կարող էր ազատ տեղից տեղ գնալ ոչ միայն Արցախի, այլև ամբողջ Անդրկովկասի ճանապարհներով։ Այսօր Հաղորտի գյուղացու թոռների անձնագրերը լրացված են արդեն ադրբեջաներեն։ Եվ այսօր նրանք զրկված են հայրենիքում ազատ տեղաշարժվելու իրավունքից, պատանդ են շրջափակման մեջ։ Հրաժարվելով կեղծ բարեպաշտությունից, ասենք նաև, որ ԼՂԻՄ-ը ոչ միայն վարչական միավոր է, այլև այդ ռեգիոնում հրաշքով ողջ մնացած քրիստոնեական աշխարհ, կտրված է ոչ միայն Հայկական հանրապետությունից, այլև ամբողջ արտաքին քրիստոնյա աշխարհից։

Մեկուկես տարի առաջ ընկերներ Գորբաչովն ու Ռիժկովը ստորագրեցին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը, որտեղ ասվում էր Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի վերակառուցման մասին։ Այսօր ոչ միայն չի վերականգնվել գեթ մի մետր, այլ պայթյուններով շարքից դուրս են բերվել բազմաթիվ ճանապարհային հատվածներ։ Օրերս «Պրավդան» հայտնեց, որ Լաչինի շրջանում մի խումբ անձինք՝ թվով երեք հարյուր մարդ, ավազակային հարձակում են գործել ավտոշարասյան վրա, որը Հայաստանից շինանյութեր էր տեղափոխում Արցախ։ Եվ կրկին չի նշված «մի խումբ անձանց» ազգությունը։ Այսօր ավտոմեքենաներով և գնացքով անհնար է հասնել Ղարաբաղ, միակ «կենաց ճանապարհը» օդային կապն է, որը ևս չափից դուրս անկայուն է, կախված է եղանակից, վերգետնյա ծառայության անկատարությունից, որը իր ներքին ևս ենթակա է տեղական իշխանությունների քմահաճույքներին։ Անհնար է Ստեփանակերտ հասնել նաև գնացքով, ամեն օր ջարդուփշուր են արվում փոխադրական միջոցները։ Ամեն օր՝ զոհեր։

Մինչև Ղարաբաղի պրոբլեմի վերջնական լուծումը իմ դեպուտատական հարցումով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին առաջարկում եմ՝ պարտավորեցնել ԽՍՀՄ Գերագույն դատախազին, համաձայն ԽՍՀՄ սահմանադրության 164 հոդվածի, գործուն կերպով վերահսկել օրենքների իրագործումը, որոնց, առաջին հերթին վերաբերում է նաև ԽՍՀՄ սահմանադրության 54 հոդվածը, որը հռչակում է՝ «Երաշխավորվում է ԽՍՀՄ քաղաքացիների անձի անձեռնմխելիությունը»։

Մի՞թե տարօրինակ չի հնչում «Երաշխավորվում է անձի անձեռնմխելիությունը», երբ մտածում ես Սումգայիթի մասին, այն մասին, որ այսօր անպատիժ կերպով ժամանակակից ղաչաղները ավազակություն են անում հայկական ճանապարհներին, պղծում են հայոց շիրիմները։

Վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ են խոսում այն մասին, որ մեր երկրի բազմաչարչար ճակատագիրը գտնվում է ժողովրդական դեպուտատների համագումարի ձեռքում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ձեռքում։ Վտանգավոր փիլիսոփայություն, վտանգավոր ձևակերպում։ Երկրի ճակատագիրը մշտապես գտնվել է ժողովրդի ձեռքում, որին հաշվետու են և՛ համագումարը, և՛ Գերագույն խորհուրդը, և՛ յուրաքանչյուր դեպուտատ։ Սա մարդկության հինավուրց օրենքներից մեկն է։ Երկիրը աղետի է ենթարկվում այն ժամանակ, երբ խախտվում է այդ օրենքը։ Հենց որ խախտվում է այդ օրենքը, սկիզբ է առնում բռնակալությունը։ Այդ մասին մենք լավ գիտենք մեր պատմությունից, որը ուսուցանում է մեզ իմաստուն խոսքերով. «Ամենադաժանը այն բռնակալությունն է, որ հանդես է գալիս օրինականության անունից և արդարության դրոշով»։ Իսկ բռնակալությունը միշտ արյուն է։ Արյուն, որ կարելի է կանխել միայն ճշմարտությամբ։

Զորի ԲԱԼԱՅԱՆ

(Արտատպված է «Խորհրդային Հայաստան» թերթից, 8 օգոստոսի 1989 թ.)